

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱՍԻՐԱՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մարտի 7-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում նախագահությամբ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանի տեղի ունեցավ Համահայկական երիտասարդական եկեղեցասիրաց կազմակերպության հերթական նիստը:

Ժողովին քննարկվեցին հուլիսի 9-14-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունենալիք Համահայկական երիտասարդական եկեղեցասիրաց կազմակերպության առաջին պատգամավորական ժողովի կազմակերպական մի շարք հարցեր:

Առաջիկա օրերին Սրբազան Հոր գլխավորությամբ նման ժողով կանցկացվի նաև Ամստերդամում՝ մասնակցությամբ Համահայկական երիտասարդական եկեղեցասիրաց կազմակերպության՝ Եվրոպայի ներկայացուցիչների:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ